ԱՐԻՆԱԼԻ ՄԱՐՏԵՐ ՀԻՍԻՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ, 4 ՄԱՅԻՍԻ, Մ.Տ.Կ.,.. Նոյեմբերեանի շրջանի Ոսկեպար գիւղում գնում են արիւնալի մարտեր։ Կան բազմաթիւ վիրաւորներ։ Զինսարքաւորումները չեն բաւականացնում։ Ոսկեպար գիւղում մարտնչում են Նժդեհ-ԱԻՄ միացեալ զունդը եւ Զօրավար Անդրանիկ ջոկատը։

Ընդհարումները հիմնականում տեղի են ունենում ԽՍՀՄ զինուած ուժերի հետ, որոնք «եղբայրաբար» համագործակցում են ադրբեջանական ՕՄՕՆականների հետ։ Յարձակումները տեղի են ունենում միաժամանակ եւ բարձունքներից՝ տանկերով ու հեռահար հրանօթներով, եւ օդից՝ ուղղաթիռների միջոցով։

Ոսկեպար գիւղում է գտնւում նաեւ բոնցքամարտիկ Սամսոն Խաչատրեանի զինուած ջոկատը։

Մարտեր են գնում նաեւ Բաղանիս-Ոսկեպար-Կօթի Շաւարշաւանի սահմանային տարածքով։

Երէկ մեր զինուած ջոկատների կողմից գնդակոծուել է ադրբեջանական Ասկիպարա գիւղը, որը դէմ յանդիման է հայկական Ոսկեպար գիւղին։

Տաւշի շրջանում նոյնպէս փոխհրաձգութիւն է։ Տաւշի վաշտում կան երեք վիրաւորներ, որոնցից մէկը արկի հարուածից կորցրել է ոտքը։

Մովսէս գիւղում արկի հարուածից զոհուել են երկու երեխայ՝ մէկը Մովսէս գիւղի բնակիչ, միւսը՝ Բերդ շրջկենտրոնից։

Մեր զինուած ջոկատները մեծ կարիք ունեն այնպիսի զինսարքաւորման, որոնցով կարելի լինի մարտնչել ուղղաթիռների դէմ, սակայն այս հրթիռների գործածութիւնը կարող է ապահովուել միայն կառավարական մակարդակով։